

Հավելված
Հայաստանի Հանրապետություն
Շիրակի մարզի Շիրակ համայնքի
ավագանու 2016թ դեկտեմբերի 23-ի
թիվ 39- Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ՇԻՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է զարգացման ծրագիրը.

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարություն և հիմնական նպատակներ:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Ծրագրի ամփոփ տեղեկագիր:
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշներ:
7. Եզրափակում:

Հավելված 1. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածք:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի Շիրակ գյուղը հիմնադրվել է 1827թ.: 1827թ. Ղարսի և Սվազի Նահանգներից գաղթածները եկել և հիմնադրվել են նախկին գյուղի հարավային մասում, Մղղոս կոչվող անձնավորության կողմից, որը նախագծել է գյուղի տարածքը գյուղական համայնքը գտնվում է Շիրակի մարզի հյուսիսային հատվածում, ծովի մակերևույթից 1965 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լեռնատափաստանային, որը բարենպաստ է հողագործության ու անասնապահության համար: Գյուղի բնակատեղին ունի շատ հին պատմություն. այդ են վկայում գյուղի գերեզմանոցի տարածքում գտնվող հեթանոսական գերեզմանները, տարածաշրջանում ամենահարմարն է հողագործության համար, Ըստ մեր ուսումնասիրությունների հավանաբար գյուղը մի քանի անգամ վերաբնակեցվել ու լքվել է՝ առայժմ անհայտ պատճառներով, 1920-ական թվականներին թուրք բռնավորները այս գյուղից առևանգում են մի գեղեցիկ հայ աղջկա: Ժամանակ անց լքված աղջիկը վերադառնում է տուն: Աղբյուրի մոտ նա մի անգամ լսում է թուրք զինվորների խոսակցությունը, այն մասին, որ մեծավորի հրամանով իրենցից ամեն մեկը գիշերը պետք է մորթի այն հայ տղամարդուն, ում տանը որ ինքը գիշերելու է:

Թուրքերեն սովորած հայ աղջիկը լսելով այդ, անմիջապես լուր է տալիս գյուղի քոխվային: Հավաքվում են գյուղի մեծերը և որոշում թուրք զինվորներին տեղավորել այն տներում, ուր մի քանի տղամարդ կա և գիշերով սպանել նրանց: Այդպես էլ անում են: Եվ այդ օրվանից գյուղը սկսում է կոչվել Ղոնախոան՝ հյուրասպան:

1944 թվականից գյուղը Ավետիք Իսահակյանի միջամտությամբ անվանվել է Շիրակ, Գյուղի ազգաբնակչությունը բացառապես հայեր են: Գյուղն իր մասնակցությունն է ունեցել ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հետագա տարիներին երկրում կատարված փոփոխություններին, անցել է խորհրդայնացման և մեծ հայրենական պատերազմի, հետպատերազման վերականգման աշխատանքներին:

1958 թվականին գործել է միջնակարգ դպրոցը:

Մինչև 1972թվականը տնտեսավորման ձևը եղել է կոլեկտիվ-կոլխոզային: 1972թվականից կոլեկտիվ տնտեսությունը վերափոխվել է խորհրդային տնտեսության / սովխոզ/

1990-1992թթ գյուղում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթաց: Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները Շիրակ գյուղը գտնվում է Հայկական պարի լեռնաշղթայի ստորոտում ծովի մակերևույթից 1650 մետր բարձրության վրա, համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից 7կմ է, շրջկենտրոնից՝ 9կմ: Գյուղը սահմանակից է Հացիկ, Ջաջուռ և Կամո գյուղերին, վարչական տարածքը 1673,77 հա է:

Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է:

Վերջին տարիներին նկատվում է անսնագլխաքանակի դինամիկ աճ:

Երբեմնի մշակութային հարուստ կյանքով ապրող գյուղը 1988 թ. երկրաշարժի պատճառով կորցրեց մշակույթի ու սոցիալ-տնտեսական նշանակության օբյեկտները, փլվեցին ու վթարային դարձան մի քանի տասնյակ բնակարաններ:

Սակայն երկրաշարժը չկարողացավ ընկճել աշխատասեր ու կամքով օժտված շիրակցուն ու նա արդեն 28 տարի է նվիրումով վերականգնում է իր ծննդավայրը: Գյուղը կամաց-կամաց կառուցապատվում ու բարեկարգվում է:

Մեր ամենաթանկ կապիտալը մարդն է, ով պետք է սիրի երկիրն ու գյուղը, հանուն մեր պետության ու ժողովրդի բարորության:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ/Թ		2012	2013	2014	2015
Բնակչության թիվը		1240	1246	1247	1257
Տղամարդ		621	619	621	638
Կին		619	627	626	619
Կրթություն		67	65	65	65
		350	350	350	350
		530	535	540	540
		170	170	170	170
		30	28	27	27
Նպաստառուների թիվը, քանակ		45	42	43	45
Տնտեսությունների թիվը		309	309	309	309
Ծնունդ		14	16	18	18
Մահ		6	4	7	6
Արտագնա աշխատողներ		100	75	90	95
Ժամանակավոր բացակայողներ		65	65	65	65
Ժամանակավոր բնակվողներ		105	94	76	87
Դպրոցական տարիքի /7-17/		176	166	158	158
Ծնողագուրկ երեխաներ		11	11	9	8
Աշխատունակներ		652	658	658	660
Թոշակառուներ		135	135	135	135
Հաշմանդամներ		32	32	33	32
Բնակարանի կարիքավորներ		30	30	30	30

ԻՆՉ Է ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ջարգացման ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսված է ռազմավարական քաղաքականությամբ, համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացմամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած տեղական ինքնքառավարման մարմինների ընտրություններում Շիրակ համայնքի ղեկավար է վերընտրվել Խորեն Արամայիսի Հարությունյանը, ծնված 1959թ-ին, ունի միջին մասնագիտական կրթություն: Նա կազմավորել է աշխատակազմ, որի աշխատակիցների հաստիքացուցակը, ինչպես նաև համայնք ավագանու կազմը ներկայացվում է ստորև:
Հարկ է նշել, որ 2016թվականի հոկտեմբերի 2-ին համայնքում կայացել է ավագանու ընտրություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցականությունը
1	Հարությունյան Սևակ	Համայնքի ղեկ. տեղակալ	1990	բարձրագույն	անկուս
2	Մարտիրոսյան Տարոն	համայնքապետարանի աշխատ. քարտ.	1986	բարձրագույն	անկուս.
3	Մատիկյան Հրայր	առաջին կարգի մասնագետ	1964	Միջն. մասնագիտ	անկուս.
4	Ռաֆայելյան Աստղիկ	Երկրորդ կարգի մասնագետ	1962	Միջն. մասնագիտ	անկուս.
5	Ռուշանյան Ռուզաննա	Համակարգչային օպերատոր	1968	Միջն. մասնագիտ	անկուս.
6	Մարտիրոսյան Տաթևիկ	Գրադարանավար	1987	Միջն. մասնագիտ	անկուս
7	Գոմցյան Նույեմզար	Հավաքարար	1963	Միջն. մասնագիտ	անկուս

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղվածությունը	Ծննդյան թվ.	Կրթությունը	Կուսակցականությունը
1.	Գևորգյան Հակոբ Վանիկի	հողագործ	1974	Միջն.	անկուս.

				մասնագիտ.	
2	Համբարձումյան Գևորգ Ամիրամի	մեխանիկատոր	1965	Միջն. մասնագիտ.	ԲՀԿ
3	Հովհաննիսյան Ռոստոմ Ռազմիկի	հողագործ	1975	Միջն. մասնագիտ	անկուս.
4	Հարությունյան Մամվել Խորնի	հողագործ	1988	Միջն. մասնագիտ.	անկուս.
5	Նիկողոսյան Հրանուշ Խաչիկի	բուժքույր	1965	Միջն.	անկուս.

ԿՈՍՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Շիրակ համայնքի ջրամատակարարումը ապահովվում է կենտրոնացված ջրամատակարարմամբ Շիրակ Ջրմուղ-Կոյուղու և սարերից եկող ընդերքի ջրային պաշարներից՝ կա 1 խորքային հոր որտեղից ինքնահոս եղանակով , անմիջապես միանալով ներտնտեսային ցանցին :

Միջին հաշվով համայնքը 1 օրվա ընթացքում ջրով ապահովված է 22-24 ժամ: Կապված տարվա եղանակների հետ, ջրի օգտագործման ցուցանիշները փոխվում են: Ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով հաճախակի տեղի են ունենում վթարներ, որոնք վերացվում են համայնքի միջոցներով: Համայնքի կոմունիկացիոն կառույցներն ունեն 40-50տարվա /այդ թվում նաև խմելու ջրի ցանցի խողովակները/ վաղեմություն և կարիք ունեն կապիտալ վերանորոգման:

Անհրաժեշտ է կատարել նաև փողոցների բարեկարգում, հեղեղատների, ոռոգման ջրի ցանցի մաքրում և բարեկարգում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կարևոր խնդիր է շրջակա միջավայրի պահպանումը: Ազգաբնակչության կողմից կուտակվում է տնտեսական աղբը, որը աղտոտում է շրջակա միջավայրը՝ հատկապես գարնանը և աշնանը: Այդ նպատակով աղբահանություն նախատեսվում է անցկացնել տարվա բոլոր եղանակներին: Այդ նպատակով համայնքի տարբեր կողմերում փորվել են մեծ փոսեր, որտեղ լցվում է տնտեսական և շինարարական աղբը: Աղբահանություն է կատարվում նաև Շիրակ Գյումրի ձանապարհների երկայնքով: Համայնքի կենտրոնական մասում գյուղապետարանի շենքի և բուժկետի միջև ընկած տարածքում կատարվել է ծառատնկում՝ կանաչ գոտի ստեղծելու նպատակով: Կան չորացած ծառեր, որոնք նախատեսվում է ամեն գարնան փոխարինել նոր տնկիներով: Նախատեսվում է նաև ծառատունկ կազմակերպել համայնքի այլ մասերում: Համայնքի տարբեր մասերում՝ մասնավորապես կենտրոնում անցկացնել շաբաթօրյակներ՝ ազգաբնակչության և համայնքապետարանի աշխատակիցների մասնակցությամբ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 310 առանձնատուն՝ 23250քառ.մ. մակերեսով: Արտագաղթի պատճառով համայնքում կան լքված, չբնակեցված տներ: Համայնքում կան կիսակառույց շինություններ, որոնց կառուցումը 2017թ-ին չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

- Համայնքի վարչական տարածքը՝ 1673,77 հա որից՝
 - 1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 1416.33 հա, որից վարելահող 909.26 հա, խոտհարք 6.6 հա, արոտ 480.91 հա և այլ հողեր 19.56 հեկտար:
 - 2. Բնակավայրի հողեր 136.16 հա, որից տնամերձ 95.29 հեկտար:
 - 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 11.73 հեկտար:
 - 4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 51.91 հեկտար:
 - 5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր 23.9 հեկտար:
 - 6. Հատուկ նշանակության հողեր 30.02 հեկտար:
 - 7. Անտառային հողեր 0 հեկտար:
 - 8. Ջրային հողեր 3.72 հեկտար:
 - 9. Պահուստային հողեր 0.00 հեկտար:
 - 10. Ընդամենը վարչատարածք հեկտար, 1673,77 որից՝
 - 1) Քաղաքացիների սեփականության հողեր 881.84 հեկտար:
 - 2) Իրավաբանական անձանց հողեր 36.5 հեկտար:
 - 3) Համայնքային սեփականության 675.05 հեկտար:
 - 4) Պետական սեփականության հողեր 80.38 հեկտար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր: Գյուղացիական տնտեսությունները մշակում են նաև խոտ, կարտոֆիլ, բանջարեղեն:

Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարությունը, կրծողները և միջատները:

Գյուղատնտեսության արտադրության կազմակերպման մյուս ձևը անասնապահությունն է, որով զբաղվում է 114 տնտեսություն

Անասնազլխաքանակը 2016 թվ. կազմում է

- խոշոր եղջերավոր	839 գլուխ
- խոզեր	72 գլուխ
- ոչխար	182 գլուխ
- թռչուններ	2025 թև

Համայնքում հողագործության և անասնապահության բնագավառում վերջին տարիներին գրեթե բնակչության եկամուտները չեն ավելանում:

Համայնքն ունի գյուղատնտեսական տեխնիկայի՝ գյուղգործիքների և մեքենաների որոշակի քանակություն, որը ժառանգված է կոլտնտեսությունից, հետևաբար շատ հին են և մաշված:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի տիպային, երկհարկանի միջնակարգ դպրոց /2001/, կից մարզադահլիճով, Դպրոցում սովորում են 122 աշակերտներ:

Դպրոցը համալրված է 26 մասնագետ մանկավարժներով: Կրթօջախը ապահովված է խմելու ջրով, կոյուղին գործում է :

Համայնքի ղեկավարության գերխնդիրն է մանկապարտեզի շենքի կառուցում :

ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ

Գյուղի մշակույթի տան շենքը ամբողջովին քանդվել է 1988թվականի երկրաշարժին:

Գյուղապետարանի շենքում է գործում գրադարանը՝ 2400 կտոր գրքային ֆոնդով:

Գրադարանը կահավորվել է 2015 թվականին, ունի գրականության համալրման կարիք:

Համայնքի մարզական կյանքը ակտիվ չէ: Համայնքն ունի մարզադաշտ: Այն հարթեցված է, օգտագործվում է ֆուտբոլային խաղերի անցկացման համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1989 թվականից համայնքի բուժկետը տեղակայված է փայտյա տնակում: Բուժկետը ապահովված չէ ջրով, կոյուղով, չկան համապատասխան պայմաններ: Բուժկետն ունի 2 աշխատող: Ներդրվել է ընտանեկան բժշկի համակարգը: Բուժկետում ժամանակին անցկացվում են մանկահասակ երեխանների պարտադիր բուժ. միջոցառումներ: Բուժ. աշխատողի կողմից ամենօրյա հսկողության տակ են նորածին երեխանները:

Ջաջուռի պոլիկլինիկայի բժիշկների կողմից բուժկետում պարբերաբար կազմակերպվում են բնակչության համար ընդունելություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքն ունի զարգացման մեծ ներուժ, իր բնական և մարդկային ռեսուրսներով: Համայնքի մի մասը գազաֆիկացված է, ապահովված ջրով:

Համայնքն ունի մատուռ , որը մշտապես ակտիվ է գործում է վերանորոգված է ու կահավորված: Համայնքի հողերի մեծ մասը ոռոգվող են, բնակլիմայական պայմանները բարենպաստ են:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները անբարեկարգ են:

Գյուղամիջյան ճանապարհների գիշերային լուսավորում չկա

խմելու ջրի ներքին ցանցի ջրագծերը քայքայված են:

Մանկապարտեզի շենք չկա:

Մշակույթի տան բացակայում:

Մարգարադահլիճի, կենցաղային սպասարկման որևէ ծառայության բացակայությունը:

Մեծ քանակությամբ աշխատանք փնտրողների առկայությունը:

Բուժկետի քարաշեն շենքի բացակայությունը:

Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրամասերի բացակայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Աշխատուժի առկայությունը
- Բարձր բերքատվություն ապահովող գյուղատնտեսության նշանակության հողատեսքերի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԿՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրագծերի անմխիթար վիճակը:
- Ներհամայնքային ճանապարհների մի մասի անբարեկարգ վիճակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կոմունիկացիոն խնդիրներ

- Փողոցների գիշերային լուսավորում
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:
- Դաշտամիջյան որոշ ճանապարհների բարեկարգում:
- Հեղեղատների, ոռոգման ցանցի առուների մաքրում:
- Խմելու ջրի քլորացում:
- Ոռոգման ներտնտեսային ցանցի բարեկարգում:
- Կամուրջների վերանորոգում:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Մշակույթի տան կառուցում :

Գյուղամիջյան ավտոբուսային կանգառների տեղադրում

Կանաչ գոտիների հիմնում:

- Գերեզմանների ցանկապատում

ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում:
- Գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ եղանակների խթանում:
- Գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ձեռք բերում:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՄՊՈՐՏ

- Հայաստանի Հանրապետության տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում / Մեծ Եղեռն /:
- Հոգևոր, եկեղեցական տոների և արարողությունների մասնակցություն, աջակցություն:
- Գրադարանի գրքային ունեցվածքի համալրում, ընթերցասրահի ստեղծում և կահավորում
- Մրցույթների /սպորտային/ կազմակերպում և անցկացում:
- Մարզագույքի / նաև ծմեռային/ ապահովում:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Կենտրոնացված աղբահանության կազմակերպում:
- Ամենամյա ծառատնկում, կանաչ գոտու հիմնում:
- Հողերի և արոտների արդյունավետ ու նպատակային օգտագործում:

ԾՐԱԳԻՐ 1.

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի իրականացումը նպատակ է հետապնդում՝

1. Ունենալ մանկապարտեզի շենք կոմունալ հարմարություններով, ջեռուցմամբ և բարեկազ տարածքով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ համապատասխան շենքային պայմաններ նախադպրոցական տարիքի երեխանների դաստիարակության, բազմակողմանի զարգացման համար:

Ավելացնել մանկապարտեզ հաճախող երեխանների թիվը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է՝

- Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
- Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ներդրումը ծրագրի իրականացման համար:
- Մրցութային կարգով շինարարության իրականացում
- Մանկապարտեզի շենքի գույքավորում
- Ֆինանսական այլ աղբյուրների հայթայթում

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Անհրաժեշտ է աշխատանք տանել ֆինանսական այլ աղբյուրներ փնտրելու ուղղությամբ / բարերարներ Սոց. ներդրումների հիմնադրամ, հանգանակում և այլն/:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ժամկետ է նախատեսվում 2018 թվականը:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքում կգործի նախակրթական հիմնարկ, որի արդյունքում կավելանա երեխաների թիվը: Մանկապարտեզի ուսումնա – դաստիարակչական աշխատանքները կկազմակերպվեն ըստ պահանջի: Մանկապարտեզը կունենա բոլոր կոմունալ հարմարությունները, հրապարակ և սպասարկող տարածք:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Ծրագիրը իրականացվելու է համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Պատասխանատու՝ Համայնքի ղեկավար Խորեն Հարությունյան:

ԾՐԱԳԻՐ 2.

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ կառուցում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը:

Նախատեսվում է մշակույթի տան շենքի կառուցում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է շինությունը դարձնել բարեկարգ և օգտագործելի: Մշակույթի տունը ծառայեցնել իր նպատակին, կազմակերպել ազգաբնակչության ազատ ժամանց ու միջոցառումներ: Ունենալ գրադարան՝ ընթերցասրահով և գրապահոցով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել առաջիկա հինգ տարների ընթացքում: Ծրագրի իրականացման համար հարկավոր է գտնել բարերարներ և աջակիցներ:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործման արդյունքում մշակույթի տունը և գրադարանը լիարժեք կծառայեն իրենց նպատակին:

ԾՐԱԳԻՐ 3.

ԳԵՐԵՋՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է գյուղի գործող թիվ 1 գերեզմանոցի ցանկապատի մետաղական ցանցի վերանորոգում և ներկում

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ պաշտպանված ու խնամված գերեզմանոցներ: Ծրագրի խնդիրներն են.

Խնդիր 1. Գործող թիվ 1 գերեզմանոցի ցանկապատի մետաղական ցանցի վերանորոգում և ներկում, տարածքի մաքրում:

Խնդիր 2. Տարածքում առանձին հատվածներում կառուցել մեքենաների կայանատեղի.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքային բյուջեի միջոցներով, 2017-2018 թթ. ընթացքում:

ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գերեզմանոցները կդադարեն «արոտատեղի» լինելուց, կբացառվեն անհարգի վնասները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Խ. Հարությունյան:

ԾՐԱԳԻՐ 4.

ՀԱՄԱՅՆՔԻ զԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գազաֆիկացումը համայնքի համար դիտվում է որպես թիվ 1 հիմնախնդիր, որովհետև դրանով է պայմանավորված գյուղի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնահարցը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- Ապահովել կրթական ու հասարակական օբյեկտներին ու բնակչությանը բնական գազով,
- Աշխուժացնել գյուղի տնտեսությունն ու մարդուն դարձնել սոցիալապես ավելի ապահով,
- Գյուղացուն պահել գյուղում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Ծրագիրը իրականացման համար դիմել ՀՀ կառավարությանը՝ պետ բյուջեյի կամ բարեգործական կազմակերպություններին ներդրումներ կատարելու կապակցությամբ:

Խնդիր 2. Ապահովել համայնքի կողմից 10 % ներդրում աշխատանքների իրականացման համար,

- Ծրագրի իրականացման տնտեսական հիմնավորումներով դիմել ՀՀ Շիրակի մարզպետարան:

ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՑԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, կփոխվի գյուղի դեմքը, կաշխուժանա տնտեսությունը, գյուղացին կդառնա ավելի վճարունակ, կկապվի գյուղին, կկրճատվի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը, դպրոցն ու հասարակական օբյեկտները կջեռուցվեն ամբողջությամբ, դպրոցում կբարձրանա հաճախելիությունն ու առաջադիմությունը:

Գյուղում կգործարկվեն վերամշակող ձեռնարկություններ, կմատուցվեն կենցաղային ծառայություններ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ժամկետը կախված է ՀՀ կառավարության աջակցությունից:

ԾՐԱԳԻՐ 5.

ԿԱՆԳԱՈՒՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է գլխավոր ճանապարհի կանգառների տեղադրում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է համայնքի ազգաբնակչության տրանսպորտային երթևեկության որակի բարձրացում: Տրանսպորտային միջոցներին սպասելիս տեղումներից, քամիներից, արևից պաշտպանվելը:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է՝

Խնդիր 1. Ունենալ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Խնդիր 2. Կազմակերպել կանգառների և նստարանների պատրաստումը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ ընթացքում:

Ունենալ քաղաքակիրթ տրանսպորտային սպասարկման տարբերակ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար՝ Խորեն Հարությունյան:

ԾՐԱԳԻՐ 6.

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ,
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նկարագրությունը.

Ծրագրով նախատեսվում է ամենօրյա ուշադրություն համայնքի շրջակայքի, հասարակական կենտրոնի ու ներհամայնքային փողոցների մաքրությանը: հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ.

Սանիտարական ապահով վիճակ:

Մաքուր փողոցներ:

Չաղտոտված շրջակա միջավայր:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել՝

Խնդիր 1. Հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

Խնդիր 2. Համայնքի փողոցներում տեղադրել աղբարկղեր:

Խնդիր 3. Աղբը տեղափոխել միայն հատուկ դրա համար հատկացված տարածք:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է կատարել ամեն տարի /2017-2021թթ/

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի կատարմամբ կբարելավվի բնակավայրի ու շրջակա միջավայրի սանիտարական վիճակը, կբացառվեն տնտեսական աղբի կուտակումները բնակավայրի տարածքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

ԾՐԱԳԻՐ 7.

ԾԱՌԱՏՈՒՆԿ

Ծրագրի նպատակը.

Ծրագրով նախատեսվում է ղեկորատիվ ու մրգատու ծառերի տնկում կանաչ գոտիներում, դպրոցամերձ տարածքում, ճամփեզրերին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է`

Խնդիր 1. Համայնքի միջոցներով ձեռք բերել տարեկան 200 տնկիներ:

Խնդիր 2. Նախատեսել ծառատունկի գոտիները:

Խնդիր 3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարակական աշխատանքի կարգով, նպատակ ունենալով մարդկանց մոտ բարձրացնելու պատասխանատվությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրագործվելու է 2017- 2021թ.թ. վաղ գարնանը կամ ուշ աշնանը:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կավելանան կանաչ գոտիների տարածքները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Խորեն Հարությունյան:

ԾՐԱԳԻՐ 8.

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը ու հիմնավորումը

Համայնքի գլխավոր փողոցը գտնվում է անբարեկարգ վիճակում: Չնայած ամենամյա հարթեցմանը որոշ հատվածներ գրեթե անանցանելի են հատկապես գարնան անձրևների և ձնհալքի ժամանակ:

Ծրագրով նախատեսվում է գլխավոր փողոցի խճապատում, փոսալցում, հարթեցում 4000մ քառ. տարածքով: Համայնքի երկրորդական փողոցների հարթեցում, խճալցում, ավազալցում:

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել համայնքի գլխավոր փողոցը, ունենալ երթևեկելի, նորոգված փողոց: Որի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների:

Խնդիր 1 Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Խնդիր 2. Ջրանցման տեղերում փորել և տեղադրել խողովակներ:

Խնդիր 3. Համայնքի գլխավոր ճանապարհը բարեկարգել 3000մ.քառ.տարածքով:

Խնդիր 4. Խճալցնել ու ավազալցնել որոշ երկրորդական փողոցներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 5.5 մլն.դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017- 2021թթ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Խորեն Հարությունյան:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա բարեկարգ գլխավոր փողոց և խճապատված և հարթեցված երկրորդական փողոցներ:

ԾՐԱԳԻՐ 9. ԽՄԵԼՈՒ ԶՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը
Ծրագիրը նախատեսում է վնասված, քայքայված խողովակների հիմնանորոգում:
Ազգաբնակչությանը քլորացված խմելու ջրով ապահովում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները
Ծրագիր նպատակն է հիմնանորոգել խմելու ջրի խողովակները: 50-60 տարիների
ընթացքում քայքայված ու վնասված ջրատարների փոխարինումը նոր խողովակներով:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են.
Ծրագրի իրականացման համար դիմել << Հայկական Կարիտաս>>-ին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրականացվելու է առաջիկա չորս տարիների ընթացքում:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ազգաբնակչությունը կունենա քլորացված, մաքուր խմելու ջուր: Քանի որ համայնքի
ջրամատակարարումը ապահովվում է ընդերքի ջրային պաշարներից, ուստի այն
օգտագործվում է առանց քլորացման: Գյուղը կապահովվի անխափան ու մաքուր խմելու
ջրով: Կվերանան մշտապես տեղի ունեցող վթարները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու
հսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Խորեն
Հարությունյան:

:

ԾՐԱԳԻՐ 10.

ԳՅՈՒՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսված է գյուղի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության համար տեղադրել լամպերի 100 կետեր, որոնք կապահովեն գիշերային ժամերի անհրաժեշտ լուսավորությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետպնդում համայնքում գիշերային ժամերին ունենալ անհրաժեշտ փողոցային լուսավորություն: Ծրագրի կատարման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Էլեկտրասյունների վրայով անցկացնել առանձին լուսավորության հաղորդալար.

Խնդիր 2 Տեղադրել լուսավորության լամպերն ու ավտոմատ լուսառելե-անջատիչ ու ժամային հաշվիչ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացվելու է 2017-2019 թ.թ. ընթացքում, որից 35 կետ 2017 թ. – 35 կետ 2018 թ. 30 կետ 2019թ.ընթացքում:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի կենտրոնն ու փողոցները կդառնան լուսավոր, գիշերային ժամերին հետիոտնի համար հնարավորություն կստեղծվի ազատ տեղաշարժվելու:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՄ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Խոբեն Հարությունյան:

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ֆինանս. գնահատ. ըստ ժամկետ-ի /մլն.դր./	2017	2018	2019	2020	2021	Ընդ. որից համ. բյուջե	Ներգրվող միջոց	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Մանկապարտեզի շենքի կառուցում	-	-	-	-	30000 00	-	3000 000	-	-
2	Մշակույթի տան կառուցում	-	-	-	-	-	30000 00	3000 000	-	-
3	Գերեզմանոցի ցանկապատի վերանորոգում	-	-	20000 00	-	-	-	2000 000	-	-
4	Համայնքի գազաֆիկացում	-	-	30000 00	30000 00	-	-	6000 000	-	-
5	Գյուղամիջյան ճանապարհի և կանգառների տեղադրում	-	-	50000 0	70000 0	80000 0	80000 0	2800 000	-	-
6	Բնակավայրի մաքրում, սանիտարական վիճակի բարելավվում, աղբահանություն	-	3500 00	35000 0	35000 0	40000 0	40000 0	1850 000	-	-
7	Ծառատնկում	-	-	20000 0	20000 0	-	-	4000 00	-	-
8	Գյուղամիջյան փողոցների վերանորոգում	-	5000 00	50000 0	50000 0	50000 0	50000 0	2000 000	-	-
9	Խմելու ջրագծի հիմնանորոգում	-	2000 000	20000 00	-	-	-	4000 000	-	-
10	Գյուղի փողոցների գիշերային լուսավորություն	-	2000 000	10000 00	-	-	-	-	-	-
	Ընդամենը	-	4800 000	95500 00	47500 00	47500 00	47500 00	2185 0000	-	-

Շիրակ համայնքի գյուղատնտեսական ցուցանիշները 2016թ- հունվարի 1- դրությամբ

		2012	2013	2014	2015
1. Գյուղացիական տնտեսությունների թիվը					
ա.	Անհատական տնտեսություններ	295	297	304	310
բ.	Կոլեկտիվ տնտեսություններ	-	-	-	-
գ.	Պետական տնտեսություններ	-	-	-	-
2. Գյուղ-ապրանքների հիմնական տեսաների արտադրությունը					
ա.	ցորեն ց.	15680	15360	16835	18550
բ.	գարի ց.	1720	1674	2355	3120
գ.	կարտոֆիլ ց.	1875	2000	1500	2050
դ.	կաղամբ ց.	75	78	78	72
ե.	Բանջարաբուստ. կուլտուրաներ ց.	191	240	199	203
3. Ցանկատարածություններ հա.					
ա.	հացահատիկ	490	480	481	530
բ.	կարտոֆիլ	75	80	60	82
գ.	բանջարաբուստային կուլտուրաներ	95.7	120	99.7	101.9
դ.	կաղամբ	2.5	2.6	2.6	2.4
ե.	առվույտ	83.2	84.8	80	80
Անասնազլխաքանակ. հատ					
ա.	խոշոր եղջերավոր անասուններ	790	790	810	839
	Այդ թվում կովեր	357	389	345	357
բ.	Մանր եղջերավոր անասուններ	68	97	144	182
գ.	Խոզեր	79	41	82	72
դ.	թռչուններ	2050	2150	2018	2025

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հ/Հ	Անվանումը, մականիշը	քանակը	Ֆիզիկական վիճակը	
			սարքին	անսարք
1.	Տրակտոր ՂՏ-75մ	10	8	2
2.				
3.				
4.	ՍՏՁ -82	3	3	-
5.	ՅՈՒՄՁ -6լ	2	1	1
7.	Կոմբայի Ե-281	1	1	-
8.	Ե- 302	1	-	1
9.	ՍԿ -5 << նիվա>>	4	3	1
10.	Կարտոֆիլ ցանող	3	2	1
11.	Հակավորող մեքենա ՊՍ -1.6	3	3	-
12.	Գութան ՊԼՆ -305	4	3	1
13.	Ա/ մեքենա ՈՒԱՁ - 469	1	-	1
14.	Պարարտանյութ ցրող	2	2	-
15.	Թույն սրսկիչ	1	-	1
16.	Կարտոֆիլի կուլտիվատոր	3	3	-
17.	Կուլտիվատոր ԿՈԳ – 3.5	2	1	1
18.	Հացահատիկի շարքացան	3	3	-
19.	Կցասայլակներ	4	4	-
21.	Բուլդոզերի կովշ	1	1	-
23.	Կարտոֆիլ քանդող	1	1	-
25.	Կորի քաշող գործիք	3	3	-

**ՇԻՐԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2016թ-ի դրությամբ**

Հ/Հ	Ցուցանիշներ	չափի միավ.	2012 փաստ.	2013 փաստ.	2014 փաստ.	2015 փաստ.
1	Համայնքի տարածքը	հա	1673,77	1673,77	1673,77	1673,77
2	Բնակչության թիվը	մարդ.	1240	1246	1247	1257
3	Ծնունդ	մարդ.	14	16	18	18
4	Մահացություն	մարդ.	6	4	7	6
5	Աշխ.ռեսուրսները, այդ թվում Զբաղվածները ըստ տնտ. ճյուղերի	մարդ.	-	-	-	-
6	Գործազրկության մակարդակը	%	-	-	-	-
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	2	2
8	Վարձակալության տրված հողեր	հա	78,1	78,1	83.9	83.9
9	Վարձակալած հողերի օգտագործման մակարդակը	%	100%	100%	100%	100%
10	Խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	55,3	55,3	55,3	55,3
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	11,7	11,7	11,7	11,7
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	956,7	956,7	956,7	956,7
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	24	24	24	24
14	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	14	14	14	14
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.ք.մ	-	-	-	-
16	Բնակելի տան կարիքավոր Ընտանիքների թիվը	հատ	45	45	39	39
17	Մեկ շնչի ընկնող ջրի սպառումը լ.	1օր	100	100	100	100
18	Ջրի կորուստները ցանցում	%	15	15	15	15
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ.	128	125	123	120
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ.	30	30	30	30

22	Գյուղապետարանի և ենթակառուցվածքային աշխատողների թիվը	մարդ	18	18	18	18
----	--	------	----	----	----	----

ՀԱՎԵԼՎԱԾ- 2

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒԻՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿ	ԳՈՒՄԱՐԸ	ՏԵԽՎԻՃԱԿԸ
	Գյուղապետարանի շենք	1	5565000	լավ
	Տնակ	3	60.000	մասամբ սարքին
	Էքսկավատոր, կառպատեց	1	17850	անսարք
	Համակարգիչ PIV/մոնիտոր,ստեղնաշար, մկնիկ	1	267.000	սարքին
	Roulter	1	16 000	սարքին
	համակարգիչ	1	210000	սարքին
	համակարգիչ	1	450000	սարքին
	Համակարգիչ Corei, RAM 2GB, HDD-640GB, Մկնիկ PS2, ստեղնաշար, speaker, cameraa	1	260.000	սարքին
	Մոնիտոր AOC - <<20>>	1	70000	սարքին
	Տպիչ Canon 3 in 14410	1	120.000	սարքին
	մոնիտոր սամսունգ-15	1	90000	սարքին
	լազերային տպիչ	1	100.000	սարքին
	համակարգիչ P 4	1	348.000	անսարք
	Տպիչ HP 38.1	1	65.000	սարքին
	Համակարգչային սեղան	1	48.000	-
	Գրասեյնակային բազկաթոռ	2	164999	-
	կախիչ	2	25.000	-
	Գրասեյնակային պահարան	1	69.999	-
	պահարան	1	125.000	-
	պահարան	1	275000	-
	Գրասեյնակային աթոռներ	18	295.000	-
	Օֆիսային աթոռ	2	40833	-
	Գրասեյնակային սեղան	5	371666	-
	շերտավարագույր	3	42.000	-
	Էլեկտրական պլիտա	3	30.000	-
	դուռ	1	17.600	-
	լուսամուկ	4	9.000	-
	INFINITI QX4 3.5	1	6.500000	-
	Գրքային ֆոնդ	2918		-
	Օֆիսային սեղան	1	210.000	-
	Օֆիսային աթոռ	1	155000	-
	Օֆիսային աթոռ	3	165.000	-

	Օֆիսային սեղան	1	90.000	
	աթոռ	12	288.000	
	Խոհանոցի անկյունակ	1	120.000	
	Փափուկ կահույկ	1կոմպլեկտ	240.000	
	լրագրասեղան	1	80.000	
	Նախասարահի կահույք	1	85.000	
	սառնարան	1	219.000	
	հեռուստացույց	1	189.000	
	Հեռուստացույցի կախիչ, ալեհավաք	1	27.000	
	պահարան	1	50.000	
	ռաուդեր	1	25.000	
	ստեղնաշար	1	10.000	
	Օֆիսային սեղան	1	100.000	
	Օֆիսային աթոռ	1	50.000	
	նստարան	12	240.000	
	գրքապահարան	6	240.000	

ԵԶՐԱՓՈՎՈՒՄ

Շիրակ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակաման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով համայնքի սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2017-2021թթ.համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ,

որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքները, այնպես էլ սոցիալ –տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման ծրագրեր կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավակնությամբ: